

УДК 551.432.:910.1

Ա. Ա. ԱՍԼԱՆՅԱՆ

«ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ», «ԲԱՐՁՐԱՎԱՆԻԱԿԻ» ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԵԼԻԵՖԻ ՉԵՎԵՐԻ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայիրեն աշխարհագրական և գեոմորֆոլոգիական գրականության մեջ Նրկրի մակերևույթի ձևերի անվանման շուրջ կան զգալի տարաձայնություններ, դեռևս 1971 թ. կանգ առնելով «Լեռնային ռելիեֆի մի քանի հասկացությունների» պարզաբանման վրա, աշխարհագրագետներ Լ. Ն. Ջոհրսյանը, Գ. Ս. Աբրահամյանը և Ֆ. Ս. Գևորգյանը նշել են, որ «գեոմորֆոլոգիան մեղ մոտ նոր է զարգանում, այդ պատճառով մայրենի լեզվով գիտական տերմիններ դեռևս չեն մշակված» [6]։ Հիշեցնենք, որ Հայաստանում աշխարհագրությունը զարգացման բազմադարյան պատմություն ունի, և բավականին շատ հասկացություններ, այդ թվում նաև ռելիեֆի ձևերին վերաբերվող տերմինները ստեղծվել են վաղուց, իսկ ավելի մեծ թվով՝ 18 և 19-րդ դարերում, գիտության բուն զարգացմանը զուգընթաց։ Իհարկե, շատ բան դեռևս կարոտ է ճշգրտման և հաստատման, ելնելով հայերենի հարուստ հնարավորություններից։ Այդ ընդունում են նաև հոգվածի հեղինակները։ Նրանք նույնիսկ դժգոհություն են արտահայտում, որ «այսօր մենք շատ ղեկավարում մի կողմ դրած հայերեն բառապաշարում եղած հասկացությունները, աշխատում ենք թարգմանել կամ «ստեղծել» նոր տերմիններ, որոնք մեկի մոտ մի կերպ են հասկացվում, մյուսի մոտ՝ այլ կերպ»։

Ուղեցույց ունենալով «ռելիեֆի մորֆոգրաֆիական բնույթը», հեղինակները խոստանում են «որոշակի պարզություն մտցնել հիշյալ հասկացությունների մեջ և նպաստել ռելիեֆի որոշ ձևերի վերաբերյալ տերմինների ստանդարտացմանը»։ Արհեստանքով պետք է նշենք, որ տեղի ուտեղը մոռանալով այդ խոստումը, հենց իրենք, լուրովի «թարգմանելով» կամ «ստեղծելով» նոր տերմիններ, պարզելու փոխարեն ավելի են խորացել տարակարծությունները, անհուսալիորեն շեղվելով ստանդարտացման նպատակից։ Նրանք մեզ ուսուցանում են, որ «այդ (լեռնային ռելիեֆի ձևերի, Ա. Ա.) տիպերն ու համալիրները պետք է համապատասխանեն ռելիեֆի հայերեն սահմանումներին, և ոչ թե բացառիորեն թարգմանվեն ռուսերենից»։ Նախ՝ ոչ թե տիպերը պետք է «համապատասխանեն» սահմանումներին, այլ վերջիններս պետք է թխեն ռելիեֆի ձևերի և տիպերի առանձնահատկություններից և, երկրորդ՝ անսլատշաճ կլիներ մտածել, թե ռուսերենում տերմինները չեն արտացոլում այդ առանձնահատկությունները։ Հետագա շարադրանքից պարզ է դառնում, որ հոգվածագիրները նպատակ են դրել «բացառիկ թարգմանությունից հրաժարվելու» անվան տակ՝ ռուսերեն տերմիններին տալ կամայական մեկնաբանություններ, թարգմանել դրանք իրենց պատկերացումներին համապատասխան, անտեսելով առավել ճշգրիտ և համեմատաբար կայունացած տերմիններն արմատավորելու և ստանդարտացնելու անհրաժեշտությունը։

Եվ իրոք, ինչ ստանդարտացման մասին կարող է խոսք լինել, եթե նրանք մեզ առաջարկում են «нагорье» հասկացությունը մի դեպքում թարգմանել «լեռնաշխարհ», մյուս դեպքում՝ «բարձրավանդակ», «платокорье»-ն՝ «բարձրավանդակ» և «плато»-ն՝ «սարահարթ», որ հողվածի սկզբում բնութագրել էին իրրե «սարավանդ», որը սարահարթից, ինչպես իրենք են գրում, տարբերվում է անհամեմատ փոքր տարածքով, սակայն հանկարծ առաջարկում են թարգմանել «սարահարթ», մինչդեռ վերջինս կիրառելի է այնպիսի վիթխարի տարածքների վերաբերյալ, ինչպիսիք են Միջին-Սիբիրական, Հնդկ-Սինդյան, Կոլորադոյի և այլ սարահարթերը: Մի՞թե սա չփոք չէ, Չէ՞ որ ստանդարտացումը այս դեպքում կնշանակեր ընտրել ուղիների տվյալ ձևին վերաբերվող տերմինային տարբերակներից միայն մեկը, այնպիսին, որն առավել ճշգրիտ արտահայտեր նրա թեկուզ մորֆոգրաֆիական դիմագիծը: Պետք է ձգտել, որ գոնե վաղուց ի վեր ընդունված և ճանաչում գտած տերմինները պահպանվեն և ոչ թե խորիմաստ «դատողությունների» հետևանքով կասկածի տակ առնվեն և ի վերջո փոխարինվեն «նորերով»:

Իժվար չէ նկատել, որ մեր հեղինակների հիմնական նպատակն է եղել նոր տերմինով փոխարինել «բարձրավանդակ» հասկացությունը, նեղացնելով նրա կիրառությունը, իսկ ավելի կոնկրետ՝ «տեղականորեն հիմնավորել» Հայաստանի սկզբնական տերիտորիան «լեռնաշխարհ» անվանելով:

Կանգ առնենք այն կարևոր հարցի վրա, թե Հայաստանի տարածքի համար որքանով է ընդունելի «լեռնաշխարհ» անվանումը:

Այն մեր գրականության մեջ է մուտք գործել համեմատաբար նորերս՝ նախկինում լայն կիրառում գտած բաժնավանդակի փոխարեն: Վերջինիս հեղինակներից մեկն էր ականավոր երկրաբան, 19-րդ դարի երկրորդ կեսին Իրանը, Կովկասը և Հայաստանը հետազոտած Հ. Աբդիս, որը մեր հայրենիքն անվանեց «Armenisches Hochland» [29, 30]: Աբդիսի գրքի ուսերևն թարգմանության մեջ այդ անվանումը մտավ իրրե «Армянское нагорье» [16, 17]: Անգլիացի հետազոտող Հ. Ֆ. Բ. Հինչի «Արմենիա» գրքում այն կոչվեց «Armenian highlands» [31]², իսկ հայերենում ընդունվեց «Հայկական բարձրավանդակ»՝ ինչպես դեռ ավելի վաղ օգտագործվել էր Ղ. Արիշանի կողմից: Վերջինս գրել է. «Աշխարհս Հայաստան... ամբողջայ ի միջի ծովուցն և ծովատարած դաշտագետնին Միջագետաց՝ բաժնավանդակ մի մեծ» [1] (ընդգծումը մերն է. Ա. Ա.): Ավելի ուշ Հայաստանը բարձրավանդակ են անվանել բոլոր հայ հետազոտողները, այդ թվում սովետահայ պատմաբաններ Հեռն [7, 8] և Հ. Մանանդյանը [13, 14], աշխարհագրագետներ Հ. Հովհաննիսյանը [11, 12], Խ. Ավդալբեկյանը և Կ. Ավետիսյանը [2]:

Հայաստանն իր ֆիզիկա-աշխարհագրական-ձևակազմական տեսքով լիովին համապատասխանում է «нагорье»-ին տրվող նորագույն և առավել կոնկրետ բնորոշմանը, իրրե «Ծրկրի մակերևույթի լայնատարած տեղամասի՝ սարահարթերի, լեռնաշղթաների և լեռնազանգվածների համակցությամբ, որոնք երբեմն հերթագայվում են ընդարձակ, տափարակ զոգավորությունների հետ և ամբողջությամբ հանդերձ տարածված են բարձրադիր, չմասնատ-

1 Գործնականում հաճախ միայն մորֆոգրաֆիական ցուցանիշի վրա հենվելը միակողմանի և անբավարար է լինում և տվյալ օբյեկտի անվանման համար հարկ է լինում գիմել գնահատական բնորոշումների, ինչպես օրինակ «հրաբխային լեռ», «լավային սարավանդ», «լավա-լիտ» և այլն:

2 Այն, մասնավորապես, երբեք չի կոչվել upland, քանի որ վերջինիս տրվում է միանգամայն այլ սահմանափակ նշանակություն (տե՛ս Л. Д. Станк, 25):

ված պատվանդանի վրա (ընդգծ. մերն է, Ա. Ա.): Օրինակներ՝ Փ. Ասիայի ներքին մասերը, Հայկական և Իրանական բարձրավանդակները, Տիբեթը» [19, Դ. 17]: Այսպիսով, բարձրավանդակների համար առավել բնորոշ են սարահարթերը, բայց նրանց խորթ չեն նաև լեռնաշղթաներն ու սուռնձին զանգվածները, որոնք բարձրանում են սարահարթա-սարավանդային ընդհանուր հիմքի կամ պատվանդանի վրա: Հայաստանը, որի տարածքի (ավելի քան 360,000 քառ. կմ.) բարձրագիծը պատվանդանը վեր է խոյանում Անատոլիական և Իրանական բարձրավանդակների և Ան-Կասպից ծովյան ու Միջագետքի ցածրավայրերի միջև, ներկայանում է իբրև բարձրավանդակ՝ սարահարթերի, սարավանդների, լեռնադաշտերի, լեռնազանգվածների երկիր, շրջապատված Լորային լեռնաշղթաներով, շատ նման Մեքսիկական կամ Իրանի բարձրավանդակներին: Վերջիններս նույնպես լեռներ ունեն՝ թե՛ կենսորոնական մասերում և թե՛ եզրերին:

Սովետական Մեծ Հանրագիտարանում գետեղված իր հոդվածում («Армянское нагорье») ակադ. Հ. Գ. Մաղաքյանը նույնպես Հայկական բարձրավանդակին վերագրում է նաև եզրային լեռնաշղթաները՝ Պոնտոփոքր-կովկասյան և Տավրոսյան աղեղները, ամբողջ համակարգի տերիտորիան ընդունելով 400.000 քառ. կմ. [19]: Այդ եզրային լեռնաշղթաներն են, որ ամեն կողմից սահմանափակելով բարձրագիծը երկիրը ստեղծում են «վանդակի» տեսք, հաղորդելով նրան ամբողջականություն և անհատականություն: Եզրային շղթաները և միջին սարահարթերում հանդիպող զանգվածները հաճախ հասնում են զգալի բարձրության, ինչպես օր. Մ. Մասիսը (5165 մ.) Հայկական բարձրավանդակում: Նրան ավելի քան կես կիլոմետրով գերազանցում է Մեքսիկայի Օրիսաբա հրաբուխը, իսկ Իրանի բարձրավանդակի հյուսիս արևելյան սահմաններում գտնվող Տիրիշմիր գագաթը ավելի քան մեկ ու կես Մասիսի բարձրությունն ունի: Եվ, այդուհանդերձ, այդ երկրները կոչվում են բարձրավանդակներ: Հետևապես Մասիսի, Արագածի, Կապուտջուղի և այլ զանգվածների ու բարձր լեռնաշղթաների առկայությունը չպետք է «խանդարի» Հայաստանը ևս համարելու բարձրավանդակ:

Հայկական բարձրավանդակում սարահարթերի ու լեռնադաշտերի մակերեսը համարյա կրկնակի, իսկ ըստ Ս. Պ. Բալյանի [18] ավելի քան հոակի գերազանցում է լեռների գրաված տարածքին: Այլ է պատկերը Սովետական Հայաստանում, որն ընդգրկում է Հայկական բարձրավանդակի մակերեսի հազիվ $\frac{1}{12}$ մասը, այն էլ նրա հյուսիս-արևելյան եզրի մի հատվածը: Այստեղ ճիշտ է, նույնպես կան սարահարթեր (Աշոցքի, Շիրակի, Լոռու, Արարատյան, Սպարանի, Կոտայքի) բայց ավելի տպավորիչ են լեռները, մանավանդ Փ. Կովկասի լեռնաշղթաները: Այդ ծալքավոր-բեկուրային կառուցվածքները և մի քանի հրաբխային շղթաներ ու լեռնազանգվածներ լրիվ կամ մասնակիորեն պրավում են հանրապետության 36 վարչա-տերիտորիալ շրջաններից մոտ 31-ի մակերևույթը: Ուստի բնական է, որ ՀՍՍՀ բնակչի համար նրա տարածքը «լեռնաշխարհ» է: Եվ երբ 1940 թ. Ստ. Լիսիցյանը սկսեց լեռնաշխարհ անվանել նաև ավանդական Հայաստանի ողջ տերիտորիան [9], ապա այդ սոսնձնապես խորթ շթվաց և ընդունվեց նույնիսկ մի շարք գիտնականների կողմից [3, 4, 5, 10]: Քիչ գեր չիաղաց նաև «լեռնաշխարհ» բառի բարենշնչունությունն ու բանաստեղծական երանգը: Եվ այն տարածվեց, շնայած շատերի համար պարզ էր, թե այդ տերմինը չի արտահայտում ողջ Հայաստանի ֆիզիկա-աշխարհագրական-տեղագրական պատկերը, որի գլխավոր յուրահատկությունը սարահարթերի գերակշռությունն է:

Բնորոշ է, որ Ղ. Ալիշանը, օգտվելով նկարագրություններից և իր ժամանակի լավագույն քարտեզներից նշել է, որ Հայաստանում «լեռների ժայռածեկոհակները... ուրեք-ուրեք երկայտարի ևս առավել վեր ամբառնան, ի հաւրակովմ երեսաց նորուն» [1, էջ 8]: Ավելի քան կես դար անց, շրջելով Հայաստանի մեծ մասը և այն քարտեզագրելով, Հ. Ֆ. Բ. Լինշը, Ալիշանից անկախ, կրկին շեշտել է երկրի գերակշռող հարթ բնույթը, այն նմանեցնելով շախմատի տախտակի, որի վրա, ինչպես խաչափիգուրներ, ցրված են լեռները, և որի ծայրամասերը եզերված են լեռնաշղթաներով [23, էջ 557]: Ոչ պակաս ընդարձակ մարդեր են ընդգրկել իրենց շրջագայությունների և հետազոտությունների ընթացքում Հ. Աբիխը [16, 17], Ֆ. Օսվալդը [24], Ա. Ղուկասովը [21] և Ֆ. Յու. Լեինսոն-Լեսսինգը [22], և նրանք բոլորն էլ Հայաստանի հիմնական տարածքը բնութագրել են իբրև բարձրավանդակ: Հարկ կա՞ արդյոք ապացուցելու, որ նրանք այդ տերմինով չէին բնորոշի Ալպերը, Մեծ Կովկասը, Հիմալայները և այլ լեռնային համակարգերը կամ բուն լեռնաշխարհները: Ոչ մի ուսական աղբյուրում այդ սխտեմները «нагорье» չեն կոչվում, չնայած Հ. Ն. Զոհրաբյանի և մյուսների այն պնդմանը, թե «լեռնաշխարհ հասկացությանը առավել համապատասխանում է ուսական «нагорье» տերմինը» [6]:

Բանաստեղծներն ու վիպագիրները հանուն վանկերի, հանգի կամ բարեհնչունության ազատ են ցանկացած ձևով անվանել ռելիեֆի բնառարկաները. բայց աշխարհագրագետն ու երկրաբանը դրանք պետք է կոչեն գիտության մեջ ընդունված և նրանց բնույթին համապատասխանող առավել ճշգրիտ տերմիններով: Բարխանը, կուեստը, լակոլիտը, լեռնամնացուկը (останец), մանրաուարերը (мелкоочечник), բոլորն էլ բանաստեղծի համար «բլուրներ» կամ «բարձունքներ» են, իսկ աշխարհագրագետը պետք է տեսնի նրանց տարբերությունները, ծագումը և տա համապատասխան անվանում: Մի՞թե կարելի է ամեն լեռնոտ երկիր լեռնաշխարհ անվանել: Կոնկրետ, Հայաստանի վերաբերյալ կարծում ենք, պարզվեց, որ պետք է կիրառել բարձրավանդակ հասկացությունը: Անշուշտ, այդ երկու բնառարկաներն էլ առաջացել են երկրի ներքին ուժերի շնորհիվ՝ լեռնակազմական պրոցեսների հետևանքով, և վերամշակվել արտաքին գործոնների կողմից: Բայց թե՛ ստեղծող և թե՛ վերափոխող պրոցեսները լեռնաշխարհում և բարձրավանդակում ընթացել են տարբեր ձևերով, ուստի նրանք ձևակազմությամբ միմյանցից տարբեր են և չեն կարող կոչվել միևնույն անվամբ. ինչպես որ նույն անունով չեն կարող կոչվել տափաստանն ու անտառը, երկրի բուսական ծածկույթի այդ երկու հիմնական տիպերը: Նույնիսկ անտառատափաստանը չի կարող նույնացվել նրանցից որևէ մեկի հետ:

Վերը մենք բերեցինք բարձրավանդակի («нагорье») բնորոշումն ու ցույց տվինք այդ բնառարկայի առանձնահատկությունները: Իսկ ի՞նչ է լեռնային համակարգը (սխտեմը) կամ լեռնաշխարհը: Աշխարհագրական տերմինների հանրագիտական բառարանում [28] նշվում է, որ «լեռնային երկրների ռելիեֆը բաղկացած է գլխավորապես լեռնաշղթաներից ու լեռնասեռերից, բաժանված գետային հովիտներով և տեկտոնական իջվածքներով» (էջ 103): Այսպիսով լեռնային երկրի կամ լեռնային սխտեմի («լեռնաշխարհ») մակերևույթի գլխավոր տարրերը համարվում են լեռնաշղթաները: Դուցի այդ, նրանց ծագման հիմնական առանձնահատկությունը համարվում է տեկտոնական լեռների տիպին պատկանելի [27], մինչդեռ Հայաստանում գերիշխում են

Հրաբխային ձևերը, հատկապես նրա կենտրոնական գլխավոր տարածքում, որտեղ լավաները լայնորեն սփռվելով սարահարթեր են գոյացրել, ինչպես և լեռներ, որոնք մեծ մասամբ ինքնուրույն են, իսկ մի մասն էլ մակադրված է հին քայքայված ու կոտրատված տեկտոնական խարխսիի վրա: Մյուս բարձրավանդակներում կենտրոնական սարահարթերը գոյացել են էրոզիոն-կոտակումային պրոցեսների հետևանքով (Իրան, Տիբեթ), որոշ տեղերում գործել են թևարտածին ուժերը և թե հրաբխականությունը (Մեքսիկական բ.): Եվ, վերջապես, լեռնային համակարգերի բնորոշ գիծն է նաև՝ նեղ շերտով, ուղիղ կամ աղեղնաձև ձգվածությունը, լեռնաշղթաների ու հովիտների դասավորության յուրահատուկ ձևերի առկայությունը՝ զուգահեռ, փետրաձև, ճառագայթաձև: Կծապատկերները [26, 27] որպիսիք բացակայում են բարձրավանդակներում, Վերջիններս ունեն լայնացած, ձվաձև հատակագիծ՝ կենտրոնական սարահարթերով և եզրային լեռնաշղթաներով, իսկ լեռնահովտային գծապատկերների առանձին տարրեր կարող են հանդես գալ եզրային ծալքավոր լեռնաշղթաներում: Հրաբխային երիտասարդ լեռնաշղթաներում և սարավանդներում որտեղ մակերեսային ջրերը նվազ են և նրանց աշխատանքը թույլ, մակերևույթի մասնատումն աննշան է և խոշոր լեռնաբազուկները փոքրաթիվ են:

Տիպիկ լեռնային համակարգեր («լեռնաշխարհներ») հանդիսանում են Ալպերը, Կովկասը: Հիմալայները, Պամիրը, Տյան-Շանը, Ուրալը, Կորդիլիերները, Անդերը և այլն (որոնցից մի քանիսին առօրյա կյանքում և գրականության մեջ երբեմն ընդհանուր կերպով անվանում են «լեռներ», բայց միանգամայն սխալ՝ «լեռնաշղթաներ», մոռանալով, որ նրանցից յուրաքանչյուրը բաղկացած է բազմաթիվ լեռնաշղթաներից):

Որոշ հեղինակներ, Հայաստանն անվանելով «լեռնաշխարհ» ստիպված են, այնուամենայնիվ, հավաստել, որ նա իրականում բարձրավանդակ է: Այսպես, Զ. Կ. Գաբրիելյանը 1961 թ. հրապարակած հոդվածի (20) հայերեն ամփոփման մեջ գրում է. «Հայկական լեռնաշխարհ... դա Իրանական, Փոքր Ասիական բարձրավանդակների, Անդրկովկասյան և Միջագետքի դաշտավայրերի միջև ընկած լեռնային բարձրավանդակն է»: Ա. Ոսկանյանը վերջերս հրատարակած «Հայկական լեռնաշխարհ» գրքույկում, իր իսկ դրած վերնագրերին հակասելով, մի շարք բնորոշումներով հաստատում է Հայաստանի տարածքի բարձրավանդակային կառուցվածքը [15]:

Շատերը, թերևս, Հայաստանի համար «սուպատվաբեր» են համարում լեռնաշխարհից «ցածր» աստիճանակարգը: Արդյոք կարի՞ք կա հիշեցնելու, որ այդ «կոշումը» պատվավոր կերպով կրում են այնպիսի վիթխարի երկրներ, ինչպես Տիբեթը, Իրանը, Բրազիլիայի հարավային բարձրադիր մասը որոնցից յուրաքանչյուրը մի քանի անգամ (նույնիսկ տասնսպասուիկ) մեծ է Հայկական բարձրավանդակից:

Այս ամենից հետևում է, որ արդեն ժամանակն է հրաժարվելու Հայաստանը «լեռնաշխարհ» անվանելուց և նախապատվությունը տալ բարձրավանդակ հասկացությանը, ավելի ճիշտ՝ վերականգնելու այդ հին անվանումն իր իրավունքների մեջ: Խնդիրն իհարկե, ամենեին էլ «հնի» նկատմամբ մեր ակնածանքի և 19-րդ դարի հետազոտողների «սլաշտամունքի» մեջ չէ, և ոչ էլ «նորերի» նկատմամբ տաժած «անվստահության» մեջ: Մենք միայն ցանկանում ենք վերականգնել գիտական ճշմարտությունը: Այդ անել անհրաժեշտ է նաև այն պատճառով, որ Հայկական սովետական հանրազգիտարանի մոսկ-

կա հատորներից մեկում պետք է բառ-հոգված տպագրվի «Հայկական բարձրավանդակ» վերնագրով:

Ցավալի է, որ այսքան պարզ տերմինաբանական հարցի լուծումը բարդացվում և ձգձգվում է: Լեյս ուղղությամբ բերվող առարկությունները մեղթվում են հիմքից դուրկ և հեշտությամբ հերքվում են օբյեկտիվ տվյալներով: Վերջում հիշենք, որ «լեռնաշխարհականների» ամենասիրած փաստարկն է բարձրավանդակ տերմինի «անհամատեղելիությունը» Հայաստանում իբր թի գոյություն ունեցող «երկրորդ կարգի» բարձրավանդակների հետ: Նրանք Գեղամա, Վարդենիսի, Զավախքի և այլ հրաբխային լեռնաշղթաները «վերամկերտել են» բարձրավանդակներ (ահա և «պարզություն մտցնելու» մի նոր նմուշ) և գտնում են, որ եթե ամբողջ Հայաստանի համար էլ նույն տերմինը գործածենք, ապա երկիրը կնմանվի ուսական «Մատրյոշկա» փայտե խաղատիկնիկին՝ իրար մեջ դրված հաջորդաբար փոքրացող տիկնիկներով: Նախ պետք է նշենք, որ հիշյալ վերամկերտումը հիմնավորված չէ, քանի որ այդ լեռները մորֆոգրաֆիական ոչ մի հատկանիշով «վանդակի» տպավորություն չեն ստեղծում և երկրորդ, պետք է հիշեցնենք, որ նրանք կոչվում էին և այժմ էլ շարունակվում են կոչվել լեռնաշղթաներ՝ «хребты», ինչպես ընդունված է БСЭ-ի հատորներում: Գեղամա լեռնաշղթա [19, տ. 6, 1971], Վարդենիսի լեռնաշղթա [19, տ. 4, 1971], Զավախքի լեռնաշղթա [19, տ. 8, 1972] և այլն: Սա նշանակում է, որ Սովետական մեծ հանրագիտարանի աշխարհագրական խմբագրությունը նպատակահարմար չի գտնում այդ համեմատաբար փոքր և, մանավանդ, միակատար, գծային ձգվածությամբ, դեպի եզրերն անընդհատ ցածրացող բնառարկաները կոչել բարդ ֆիզիկական տիպ ներկայացնող վիթխարի երկրները բնորոշող տերմինով: Հայկական հանրագիտարանի առաջին հատորներում ևս «լեռնաշղթա» տերմինը պահպանել է իր իրավունքները (տես ՀՍՀ 2-րդ հատորում՝ «Գեղամա լեռնաշղթա»):

Հետևապես բարձրավանդակ տերմինը մնում է կիրառելի միայն ընդհանուր՝ խոշոր բնառարկայի, ավանդական Հայաստանի «լեռնային կղզու» տարածքի վերաբերյալ, մանավանդ որ ՀՍՀ 4-րդ հատորում արդեն «Иранское нагорье»-ի համար տրված է «Իրանական բարձրավանդակ» համարժեքը:

ԳԼԱ գիտա-տեխնիկական
տերմինաբանության խորհուրդ

Ստացվել է 11. VII. 1978.

1 Ըստ երևույթին ընդունելություն չի գտնում նաև վերոհիշյալ հոգվածագիրների «ստեղծած» տերմին-բառակապակցությունը՝ «լեռնավահանը»: Վերջինս անհարմար է նրանով, որ, նախատեսված լինելով մորֆոգրաֆիական տիպն արտահայտելու համար, պետք է կիրառվի միայն հրաբխային գոյացումների, այսինքն որոշակի զենետիկական տիպի նկատմամբ, չխոսելով արդեն այն մասին, որ ուստերենում, կամ որևէ այլ լեզվում նրան համարժեքներ չկան: Բացի այդ «վահան» տերմինը (щит, shield, Schild, bouclier), ինչպես հայտնի է միանգամայն այլ բովանդակություն ունի (պլատֆորմային մարզերում հնագույն ապարների ելքեր) և լեռնագրական բնառարկայի իմաստ չի արտահայտում, ուստի և մեր երրորդական-չորրորդական լավաններից կաղմված լեռնաշղթաները «վահաններ» (թեկուզ և «լեռնա»-ով) կոչվել չեն կարող:

О ТЕРМИНАХ «ЛЕРНАШХАР», «БАРЦРАВАНДАК» И НЕКОТОРЫХ ДРУГИХ ВОПРОСАХ ТЕРМИНОЛОГИИ РЕЛЬЕФА АРМЕНИИ

Резюме

В статье в основном критикуются взгляды некоторых авторов, применяющих относительно территории Армении (в широком смысле—в исторических границах) термин «лернашхар», т. е. «страна гор» или «горная страна», вместо традиционно установленного термина «барцравандак» (нагорье). На основе высказываний ряда выдающихся исследователей (Г. Алишан, Г. Абих, Х. Линч, Ф. Освальд, Абр. Гукасов и др.) и анализа картографического материала показывается необоснованность такой замены и делается предложение, чтобы в соответствующем номере Армянской Советской энциклопедии традиционный термин был восстановлен.

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Ալիշան Գ. Տեղագիր հայոց մեծաց. Վենետիկ, 1856:
2. Ավետիսյան Կ. «Հայկական բարձրավանդակ» և «Արևելյան Հայաստան» հասկացությունների սխալ օգտագործման մասին. ՀՍՍՀ ԳԱ տեղ. հաս. գիտութ. 1950, № 7:
3. Բաղդասարյան Ա. Բ. (Գլխ. խմբ.) Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն. Երևան 1971.
4. Բաղդասարյան Ա. Բ. (գլխ. խմբ.) Հայկական ՍՍՀ ատլաս. Երևան—Մոսկվա, 1961.
5. Իրեմյան Ս. Տ. Հայ ժողովրդի պատմություն. հ. 1, Երևան, 1963:
6. Զոհրաբյան Լ. Ն., Աբրահամյան Գ. Ս., Գևորգյան Ֆ. Ս. — Լեռնային ուղեգիր մի քանի հասկացությունների մասին, ՀՍՍՀ ԳԱ Տեղ. գիտութ. երկրի մասին. հ. XXIV, № 2, 1971:
7. Լեռ. Հայոց պատմություն. հ. 1, Երևան, 1966:
8. Լեռ. Հայ հայրենիքը, Թիֆլիս, 1915.
9. Լիսիցյան Ստ. ՀեՍՀ ֆիզիկական աշխարհագրություն. Երևան, 1940.
10. Հակոբյան Թ. Խ. Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968:
11. Հովհաննիսյան Հ. Հայաստանի Ս. Խ. Հանրապետության աշխարհագրություն, Երևան, 1927:
12. Հովհաննիսյան Հ. Ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1932.
13. Մանանդյան Հ. Հայաստանի հին ճանապարհները. Երևան, 1930.
14. Մանանդյան Հ. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան 1932:
15. Ոսկանյան Ա. Հայկական լեռնաշխարհ. Երևան, 1976:
16. Абих Г. Геология Армянского нагорья. Западная часть. Пятигорск, 1899.
17. Абих Г. Геология Армянского нагорья. Восточная часть. Пятигорск, 1902.
18. Бальян С. П. Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей. Ереван, 1969.
19. Большая Советская Энциклопедия III—изд. тома за 1971—1974.
20. Габриелян Г. К. О некоторых географических понятиях Армянского нагорья. Изв. АН Арм. ССР, геол.-географич. науки, т. XIV, № 5, 1961.
21. Гукасов Абр. Основные черты строения Армянского нагорья. Зап. КОРГО, кн. XXII, вып. 1, 1901.
22. Левинсон-Лессинг Ф. Ю. Армянское вулканическое нагорье «Природа», № 5, 1923.
23. Линч Х. Ф. Б. Армения, т. 1, Тифлис, 1910.

24. Освальд Ф. К. К истории тектонического развития Армянского нагорья. ЗКОИРГО, кн. XXIX, вып. 2, 1916.
25. Стилл Л. Д. (ред.) Словарь общегеографических терминов, т. 1—2, Москва, 1975—1976.
26. Шукин И. С. Общая морфология суши, т. II, Москва, 1936.
27. Шукин И. С. Горы. БСЭ, т. 7, 1971.
28. Энциклопедический словарь географических терминов. Гл. ред. Калесник С. В., Москва, 1968.
29. Abich H. Geologie des Armenischen Hochlandes I—Westhälfte. Wien, 1882.
30. Abich H. Geologie des Armenischen Hochlandes. II—Osthälfte. Wien, 1887.
31. Lynch H. F. B. Armenia. v. I, London, 1901.
32. Ellsee Reclus. Nouvelle Geographie Universelle, t. VI, Paris, 1881.